

Քանաչի բառեր՝ կոռուպցիա, կառավարման արդյունավետություն, գործունային վերլուծություն, ոչ գծային բազմագործոն ռեգրեսիա, պանելային տվյալներ:

ՀՏԴ 338.24

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ

Ատենախոսության թեմա՝
Կոռուպցիայի գնահատման մեթոդներն ու մոդելները
սահմանադրականության համատեքստում

Գեորգի ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԵՊՀ տնտեսագիտության եւ
կառավարման ֆակուլտետի ասպիրանտ

Գիտական ղեկավար՝
Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Խնտիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում լայնորեն քննարկվում է կոռուպցիայի իրողությունը, վերջինիս էությունը և պայմանավորող գործոնները: Ծավալվում են բազմաթիվ ինչպես իրավագիտական, այնպես էլ տնտեսագիտական հետազոտություններ, որոնք միտված են վերհանել կոռուպցիան պայմանավորող գործոնները և առաջադրել թիրախավորված և արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականություն:

Վերջինս կարևորվում է այն իմաստով, որ անարդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականությունը երկակի բացասական ազդեցություն է ունենում հանրային բարեկեցության վրա, քանի որ մի կողմից այն առաջացնում է տնտեսապես չարդարացված տրանզակցիոն ծախսեր, իսկ մյուս կողմից՝ պահպանվում է առկա կոռուպցիայի մակարդակը: Այսպիսով, ի հակադրություն հայտնի տնտեսագետ Ադամ Սմիթի «անտեսանելի ձեռքի» տեսությանը [1], ըստ որի շուկան ինքնակարգավորվող մեխանիզմ է, տնտեսագետները հաճախ կոռուպցիան դիտարկում են որպես «անտեսանելի սև ձեռք» [2], ինչը խաթարում է ժողովրդավարական, իրավական և տնտեսական մեխանիզմների և օրենքների օպտիմալ իրացվելիությունը՝ հանգեցնելով սահմանադրականության դեֆիցիտի¹ և խոչընդոտելով հանրային բարեկեցության մակարդակի աճին:

Հասկանալու համար հակակոռուպցիոն պայթարի անարդյունավետությունները, անհրաժեշտություն է առաջանում սկզբնապես ախտորոշել առկա իրավիճակը, այն է՝ դիտարկել կառավարման համակարգը բնորոշող ցուցանիշները, ինչն ազդեցություն է ունենում երկրում առկա կոռուպցիայի մակարդակի վրա:

Հաշվի առնելով կոռուպցիայի առկա մակարդակը, հարց է առաջանում, որո՞նք են կառավարման համակարգը բնորոշող և կոռուպցիան պայմանավորող գործոնները:

Այս հարցին պատասխանելու համար ստորև դիտարկվել են հետևյալ ցուցիչները՝

- Կոռուպցիայի ընկալման համաթիվ (CPI)
- Մարդկային զարգացման համաթիվ (HDI)
- Արտահայտման ազատության համաթիվ (FEI)
- Օրինական ընտրությունների համաթիվ (CEI)
- Քաղաքական կայունության, բռնությունների և տեռորիզմի բացակայության համաթիվ (PSAVTI)
- Կառավարման հաշվետվողականության համաթիվ (GAI)
- Կառավարման թափանցիկության համաթիվ (GTI)
- Իշխանությունների հանդեպ հանրային վստահության համաթիվ (PTPI)
- Դատական իշխանության զսպումը գործադիր իշխանությանը համաթիվ (JCEI)
- Օրենսդիր իշխանության զսպումը գործադիր իշխանությանը համաթիվ (LCEI)
- Իշխանության թևերի տարանջատման համաթիվ (DPI)

Տվյալները ձեռք են բերվել Թրանսպիրենսի Ինթերնեյշնալ հակակոռուպցիոն կենտրոնի [4], Համաշխարհային տնտեսական համաժողովի [5] և ՄԱԶԾ-ի շտեմարաններից [6]: Դիտարկվել են 2011-2015 թթ.-ները 133 երկրների համար:

Տվյալներում առկա կոռեկցիայի մակարդակը անհրաժեշտություն է ստեղծում կատարել գործունային վերլուծություն՝ մոդելում բազմակոլլեկտորությունը բացառելու և չափողականությունը կրճատելու նպատակով:

Այդուհանդերձ 1-ում ներկայացված են գործունային վերլուծության արդյունքները: Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 1-ից, կառավարման հաշվետվողականության համաթիվը (GAI), կառավարման թափանցիկության համաթիվը (GTI) և իշխանությունների հանդեպ հանրային վստահության համաթիվը (PTPI) միավորվել են մեկ գործոնում, որն այստեղ կանվանվի կառավարության և հասարակության փոխկապակցվածության գործոն (GSLF): Մյուս կողմից, մեկ գործոնում են ներառվել դատական իշխանության զսպումը գործադիր իշխանությանը համաթիվը (JCEI), օրենսդիր իշխանության զսպումը գործադիր իշխանությանը համաթիվը (LCEI) և իշխանության թևերի տարանջատման համաթիվը (DPI), և ստացված գործոնը ներկայացնում է զսպումների և հակակշիռների համակարգը (CBF):

¹ Սահմանադրական նորմերի իրական կյանքում արտացոլման, սահմանադրական դեֆիցիտի չափման ու դրա կրճատման տեսանկյունից տարբեր հեղինակների կողմից առաջադրվում են արդյունավետ կառավարման մեթոդաբանական լուծումներ ու գործիքակազմ, որոնք, մասնավորապես, կարելի է տեսնել Սարգսյան Հ.-ի [3] հետազոտությունում:

Աղյուսակ 1.
Գործնային վերլուծության արդյունքները

Rotated Component Matrix^a

	Component	
	1	2
<i>GTI</i>	.949	
<i>PTPI</i>	.916	
<i>GAI</i>	.815	
<i>LCEI</i>		.911
<i>JCEI</i>		.886
<i>DPI</i>		.806

Extraction Method: Principal Component Analysis.
Rotation Method: Varimax with Kaiser Normalization.

a. Rotation converged in 3 iterations.

Առկա համաթվերի և ստացված գործնային փոփոխականների կիրառմամբ, կատարվել է ստորև նշված մոդելի գնահատումը՝

$$CPI_{ij} = \beta_0 + \beta_1 * HDI_{ij} + \beta_2 * CEI_{ij} + \beta_3 * FEI_{ij} + \beta_4 * PSAVTI_{ij} + \beta_5 * CBF_{ij} + \beta_6 * CBF_{ij}^2 + \beta_7 * GSLF_{ij} + \beta_8 * GSLF_{ij}^2 + e$$

որտեղ՝ *i*-ն երկրի ցուցիչն է, իսկ *j*-ն՝ տարեթիվը:

Ստդելի գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում: Ինչպես պարզ է դառնում աղյուսակ 2-ից, ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալի են, ունակ և անշեղ: Մասնավորապես, *F* և *t* վիճակագրականները ցույց են տալիս մոդելի բացատրող փոփոխականների ստացված գործակիցների 0 լինելու հավանականության բացառումը, մոդելում բացատրող փոփոխականները բացատրում են կախյալ փոփոխականի վարիացիայի 87.1%-ը (*Adjusted R-squared* = 0.871):

Աղյուսակ 2.
Ստդելի գնահատման արդյունքները

<i>Dependent Variable: CPI</i>				
<i>Method: Panel Least Squares</i>				
<i>Sample (adjusted): 2011 2015</i>				
<i>Periods included: 5</i>				
<i>Cross-sections included: 133</i>				
<i>Total panel (unbalanced) observations: 641</i>				
<i>Variable</i>	<i>Coefficient</i>	<i>Std. Err.</i>	<i>t Stat.</i>	<i>Prob.</i>
<i>HDI</i>	21.7759	2.8300	7.6947	0.0000
<i>CEI</i>	10.4418	2.2556	4.6292	0.0000
<i>FEI</i>	11.2781	2.4833	4.5416	0.0000
<i>PSAVTI</i>	2.9973	0.5154	5.8152	0.0000
<i>CBF</i>	4.2068	0.6866	6.1273	0.0000
<i>CBF^2</i>	1.2072	0.3773	3.1992	0.0014
<i>GSLF</i>	9.7420	0.4064	23.9726	0.0000
<i>GSLF^2</i>	1.1921	0.2205	5.4063	0.0000
<i>C</i>	11.8675	2.6172	4.5344	0.0000
<i>R-squared</i>	0.87344	Mean dep. var	44.673	
<i>Adjusted R-squared</i>	0.87183	S.D. dependent var	19.837	
<i>S.E. of regression</i>	7.10189	Akaike info crit	6.773	
<i>Sum squared resid</i>	31,876.12	Schwarz crit	6.835	
<i>Log likelihood</i>	(2,161.60)	Hannan-Quinn crit	6.797	
<i>F-statistic</i>	545.18810	Durbin-Watson stat	0.282	
<i>Prob(F-statistic)</i>	0.00000			

Մարդկային զարգացման համաթվի (ՄՉԻ-ին կոմպլատիվ համաթիվ է, որը ներառում է շնչային ՅՆԱ-ն, կրթության մակարդակը/տարիների քանակը և կյանքի սպասվող տևողությունը) միավոր փոփոխությունը զուգորդվում է կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 21.7 միավոր փոփոխության հետ: Օրինական ընտրությունների համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 10.4 միավոր փոփոխության հետ, արտահայտման ազատության համաթիվը, որը զսպիչ գործոն է իշխանական ապարատի ամենաթողության հանդեպ, զուգորդվում է կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 11.2 միավոր փոփոխության հետ, իսկ քաղաքական կայունության և բռնությունների ու տեռորիզմի բացակայության համաթվի միավոր փոփոխությունը զուգորդվում է կոռուպցիայի ընկալման

համաթվի միջինում 2.9 միավոր փոփոխության հետ: Հետաքրքրական է նաև բացատրող գործոնների գծային և քառակուսային անդամների ազդեցությունը կոռուպցիայի ընկալման համաթվի վրա: Մասնավորապես, 2 գործոնների դեպքում էլ քառակուսային անդամները ունեն դրական նշան, ինչը փաստում է, որ գործոնի սահմանային ազդեցությունը կոռուպցիայի ընկալման համաթվի վրա ունի աճող տեսք: Այսպես, եթե օրինակ զսպումների և հակակշիռների գործոնը հավասար է 1-ի, ապա այս կետից միավոր փոփոխությունը կհանգեցնի կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 7.8 միավոր ընդհանուր փոփոխության: Նույնական է նաև կառավարության և հասարակության փոխկապվածության գործոնի ազդեցության մեկնաբանությունը կոռուպցիայի ընկալման համաթվի վրա: Այս դեպքում գործոնի 1 միավորից միավոր փոփոխությունը կհանգեցնի կոռուպցիայի ընկալման համաթվի միջինում 13.3 միավոր ընդհանուր փոփոխության:

Եզրակացություն: Այսպիսով, ստացվում է, որ կառավարման համակարգը բնութագրող գործոններն ունեն լայնամասշտաբ ազդեցություն երկրում առկա կոռուպցիայի մակարդակի վրա: Ուստի, հակակոռուպցիոն ծրագրի լրամշակման շրջանակներում անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել վերը նշված գործոններին, քանի որ հենց այդ գործոնների օպտիմալ կառավարումը կարող է հանգեցնել երկրում կոռուպցիայի ցածր մակարդակի, կառավարման արդյունավետության աճի և հանրային բարեկեցության բարձրացման:

Գրականություն

1. Smith, A. An Inquiry into the Nature and Causes of Wealth of Nations // Indianapolis: Liberty Fund.-1976b [1776].
2. Harutyunyan Kh. National Integrity System Assessment Armenia 2014 // TIAC, Working papers.-2015.
3. Harutyunyan, G., Sargsyan, H., and Gevorgyan, R. 2017. Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies. Journal of Advanced Research in Law and Economics, Volume VIII, Summer, 4(26): 1126 – 1135.
4. <http://transparency.am/hy/cpi>
5. <https://www.weforum.org/>
6. <http://hdr.undp.org/en/content/human-development-index-hdi>

*Ներկայացվել է 13.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.*